ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ГЕГАРКУНИКСКИЙ МАРЗ
МУНИЦИПАЛИТЕТ с.НОРАШЕН

ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 29

17. նոյեմբերի 2017թ.

Նորաշեն համայնքի տարածքում գործող կազմակերպությունների աղբահանության վճարներ սահմանելու մասին:

/Զեկ.Գ.Գասպարյան /

Համաձայն՝ « Աղբահանության և սանիտարական մաքրման մասին » ՀՀ օրենքի համապատասխան դրույթներին, համայնքի ավագանին.

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Նորաշեն համայնքի տարածքում գործող կազմակերպությունների՝ ըստ գործառույթային նշանակության, համար սահմանել աղբահանության և սանիտարական մաքրման վճարների դրույքաչափեր.

ա) Առևտրի, այդ թվում՝ շուկաների, հանրային սննդի և բնակչությանն սպասարկող կազմակերպությունների աղբահանության ամսեկան վճարի չափը 1 ք/մ-ի համար սահմանել 25 / քսանհինգ /ՀՀ դրամ:

բ)Հյուրանոցներ և հյուրանոցային ծառայություն՝ աղբահանության ամսեկան վճարի չափը 1 ք/մ-ի համար սահմանել 15 /տասնհինգ / ՀՀ դրամ:

գ)Արտադրական , արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների համար՝ աղբահանության ամսեկան վճարի չափը 1 ք/մ-ի համար սահմանել 6 / վեց / ՀՀ դրամ:

դ)Կրթության, մշակութային, առողջապահական, սպորտայինն, գիտահետազոտական շինությունների համար՝ աղբահանության ամսեկան վճարի չափը 1 ք/մ-ի համար սահմանել 3 / երեք / ՀՀ դրամ:

2.Համայնքապետարանի աշխատակազմին.

Հաշվառել համայնքի տարածքում գործող կազմակերպությունները և ըստ զբաղեցրած տարածքների չափսերի՝ կատարել յուրաքանչյուրին հասանելիք աղբահանության վճարի հաշվարկներ և յուրաքանչյուրի հետ կնքել աղբահանության ծառայությունների մատուցման պայմանագրեր:

Համայնքի ավագանու անդամներ.

Կողմ՝ ..... Պ.Ավագյան
Կողմ՝ ..... Ա.Գրիգորյան
Կողմ՝ ..... Խ.Հակոբյան
Կողմ՝ ..... Ռ.Սահակյան
Կողմ՝ ..... Ա.Սարիբեկյան

ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ԳԱՍՊԱՐՅԱՆ